ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4(18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 11.12.18 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 25 -ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ՝

1. **“Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի” և “Բարձրագույն մաթեմատիկայի” ամբիոնների վարիչների ընտրություն:**
2. **Ֆակուլտետի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:**
   Զեկ.՝ ամբ. վարիչներ
3. **Բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:**
   Զեկ.՝ ամբ. վարիչներ
4. **Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի հաղորդումը ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:**
5. **Ընթացիկ հարցեր:**

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի **" Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի " ամբիոնի վարիչի** պաշտոնի համար հայտարարված մրցույթի հարցը:

Արտահայտվեցին.- Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, Ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ս.Հաջյանը հայտնեց, որ այդ տեղի համար դիմել է պրոֆեսոր **Ա.Ժ. Բաբաջանյանը**: Նա ծանոթացրեց ներկայացված անձնական գործի տվյալների հետ և ներկայացրեց "Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի" ամբիոնի նիստի քաղվածքը, որտեղ ամբիոնը միաձայն երաշխավորում է Ա.Ժ. Բաբաջանյանին այդ պաշտոնի զբաղեցման համար: Դրականապես արտահայտվեցին ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Յու.Լ. Վարդանյանը և ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը: Հատկապես նշվեց գիտամանկավարժական և կազմակերպչական դրական հատկանիշները, որը ցուցաբերել է Ա.Ժ. Բաբաջանյանը իր դասախոսական գործունեության ընթացքում:

Որոշեցին.- " **Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի**" ամբիոնի վարիչի պաշտոնի համար **Ա.Ժ. Բաբաջանյանի** ընտրության հարցը, ըստ կանոնակարգի, դնել փակ քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ Կ.Մ. Ղամբարյան, Ա.Յու. Վարդանյան և Ռ.Ա. Միրոյան կազմով:

Լսեցին- Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ պրոֆեսոր Կ.Մ. Ղամբարյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 25-ը, քվեարկությանը մասնակցել են՝ 25-ը: Արդյունքներն այսպիսին են. կողմ՝ **25**, դեմ՝ **0**, անվավեր՝ **0** :

Որոշեցին.- Հաստատել հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայացրած արդյունքները, որոնց համաձայն ռադիոֆիզիկայի ֆակուլտետի " **Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի** " ամբիոնի վարիչի տեղի համար հայտարարված մրցույթի հիման վրա պրոֆեսոր **Արսեն Ժորայի Բաբաջանյանը** ընտրվում է այդ պաշտոնում:

Լսեցին- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի **" Բարձրագույն մաթեմատիկայի" ամբիոնի վարիչի** պաշտոնի համար հայտարարված մրցույթի հարցը:

Արտահայտվեցին.- Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ս.Հաջյանը հայտնեց, որ այդ տեղի համար դիմել է դոցենտ **Հ.Ս. Հարոյանը**: Նա ծանոթացրեց ներկայացված անձնական գործի տվյալների հետ և ներկայացրեց "Բարձրագույն մաթեմատիկայի" ամբիոնի նիստի քաղվածքը, որտեղ ամբիոնը միաձայն երաշխավորում է Հ.Ս. Հարոյանին այդ պաշտոնի զբաղեցման համար: Դրականապես արտահայտվեցին ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Յու.Լ. Վարդանյանը և ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը: Հատկապես նշվեց Հ.Ս. Հարոյանի գիտամանկավարժական բարձր հատկանիշները:

Որոշեցին - "**Բարձրագույն մաթեմատիկայի**" ամբիոնի վարիչի պաշտոնի համար **Հ.Ս. Հարոյանի** ընտրության հարցը, ըստ կանոնակարգի, դնել փակ քվեարկության: Այդ կապակցությամբ բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ Կ.Մ. Ղամբարյան, Ա.Յու. Վարդանյան և Ռ.Ա. Միրոյան կազմով:

Լսեցին - Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ պրոֆեսոր Կ.Մ. Ղամբարյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 25-ը, քվեարկությանը մասնակցել են՝ 25-ը: Արդյունքներն այսպիսին են. կողմ՝ **25**, դեմ՝ **0**, անվավեր՝ **0** :

Որոշեցին - Հաստատել հաշվիչ հանձնաժողովի նախագահի ներկայացրած արդյունքները, որոնց համաձայն ռադիոֆիզիկայի ֆակուլտետի " **Բարձրագույն մաթեմատիկայի** "

ամբիոնի վարիչի տեղի համար հայտարարված մրցույթի հիման վրա պրոֆեսոր **Հովհաննես Սամվելի Հարությանը** ընտրվում է այդ պաշտոնում:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին- Ամբիոնի վարիչների հաղորդումները մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Արտատայտվեցին.- Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն դոցենտ Ա.Հ. Մակարյանը և Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վ.Մ. Հարությունյանը: Նշվեց, որ երկու ամբիոններում էլ մագիստրոսական թեզերի կատարման աշխատանքները ընթանում են բնականոն հունով և մտահոգիչ խնդիրներ չկան:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին--Ամբիոնի վարիչների հաղորդումները Ֆակուլտետի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին հարցը:

Արտատայտվեցին.- Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն դոցենտ Ա.Հ. Մակարյանը և Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վ.Մ. Հարությունյանը: Նշվեց, որ երկու ամբիոններում էլ ավարտական աշխատանքների կատարման ընթացքը գոհացուցիչ է:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..

Լսեցին-Ֆակուլտետի ՈՒԽ նախագահի հաղորդումը ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

Որոշեցին- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգը սպառված է:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝ Խ.Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար, ֆ.մ.գ.թ՝ Մ.Ս. Ալեքսանյան